

Տևողությունը – 150րոպե

1. Գտնել $x26y$ տեսքի քառանիշ թվերի քանակը, որոնք բաժանվում են 12-ի:
 - 1) 3
 - 2) 6
 - 3) 9
 - 4) 12
2. Դավիթը թիվը բաժանում է 6-ի և 8-ի, հետո ստացված մնացորդները բազմապատկում է: Արդյունքում նա չի կարող ստանալ.
 - 1) 15
 - 2) 18
 - 3) 24
 - 4) 35
3. Ուղղանկյունանիստի ձև ունեցող ջրամանի չափերն են՝ 30սմ, 40սմ և 50սմ: Ջրամանում կա 32լ ջուր: Ջրամանի n ր մասն է դատարկ:
 - 1) $\frac{8}{15}$
 - 2) $\frac{7}{15}$
 - 3) $\frac{7}{16}$
 - 4) $\frac{9}{16}$
4. Արամի գրքերը 200-ից շատ են և 250-ից քիչ: Ընդ որում գրքերի 25%-ը վեպեր են, $\frac{1}{9}$ մասը՝ բանաստեղծություններ: Քանի՞ գիրք ունի Արամը:
 - 1) 216
 - 2) 225
 - 3) 243
 - 4) այլ պատասխան
5. Դասարանում տղաների $\frac{3}{4}$ մասը նստած է աղջիկների $\frac{4}{5}$ -ի կողքին: Ամենաքիչը քանի՞ աշակերտ կարող է ունենալ այդ դասարանը:
 - 1) 20
 - 2) 31
 - 3) 32
 - 4) 60
6. Իրար հետևից 100 անգամ գրված է 2019 թիվը: Ստացված բազմանիշ թվից ամենաշատը քանի՞ թվանշան կարելի է ջնջել, որ ստացված թվի թվանշանների գումարը լինի 1000:
 - 1) 220
 - 2) 240
 - 3) 250
 - 4) 300
7. $AX \cdot BX=2001$ հավասարության մեջ AX -ը և BX -ը երկնիշ թվեր են: Գտնել $A+B+X$ արտահայտության արժեքը:
 - 1) 20
 - 2) 28
 - 3) 26
 - 4) 17
8. 12 բնական թվերի միջին թվաբանականը 7 է: Այդ թվերից մի քանիսը մեծացրին 3-ով: Արդյունքում միջին թվաբանականը դարձավ 8: Քանի՞ թիվ մեծացրին:
 - 1) 4
 - 2) 6
 - 3) 8
 - 4) այլ պատասխան
9. Սեղանին դրված է գերբը դեպի ներքև 5 մետաղադրամ: Յուրաքանչյուր քայլում թույլատրվում է միաժամանակ շրջել երեք մետաղադրամ: Ամենաքիչը քանի՞ քայլ հետո մետաղադրամները դրված կլինեն գերբը դեպի վերև:
 - 1) 3
 - 2) 5
 - 3) 2
 - 4) 6
10. Ուղղանկյունը տրոհված է երեք հավասար քառակուսիների, որոնց պարագծերի գումարը 60 սմ է: Գտնել ուղղանկյան մակերեսը:
 - 1) $75սմ^2$
 - 2) $40սմ^2$
 - 3) $45սմ^2$
 - 4) $25սմ^2$
11. ABCD քառանկյան A և C անկյունները հավասար են 90° : $AB=11$, $BC=7$, $CD=9$, $AD=3$: Գտնել քառանկյան մակերեսը:
12. Գանձապահը թատրոնի առաջին շարքի բոլոր տոմսերը վաճառելիս, ինչ-որ մի տեղի համար սխալմամբ 2 տոմս վաճառեց: Այդ շարքի համար վաճառված տոմսերի տեղերի համարների գումարը 53 է: Ո՞ր տեղի համար է երկու տոմս վաճառվել:
13. Աշոտը գնեց 5 խնձոր: Առանց առաջինի՝ բոլորը միասին 798 գ է, առանց երկրորդի՝ 794 գ, առանց երրորդի՝ 813 գ, առանց չորրորդի՝ 806 գ, առանց հինգերորդի՝ 789 գ: Քանի՞ գրամ են կշռում բոլոր հինգ խնձորները միասին:
14. Եթե եռանիշ թվին գումարենք 6, ապա այն կբաժանվի 7-ի, եթե 7 գումարենք, կբաժանվի 8-ի, եթե 8 գումարենք, կբաժանվի 9-ի: Գտեք այդ պայմանին բավարարող ամենափոքր թիվը:
15. Տնտեսուհին իր ունեցած գումարով կարող է գնել կամ 15 կգ դեղձ, կամ 20 կգ տանձ, կամ 34 կգ խնձոր: Նա գնեց 3 կգ դեղձ և 6 կգ տանձ: Մնացած գումարին տնտեսուհին քանի՞ կգ խնձոր կարող է գնել: